

**Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի
2015թ. նիստերի արձանագրություններ
Արձանագրություն 10**

2015թ. դեկտեմբերի 5-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին ներկա էին գիտխորհրդի 31 անդամներից 27-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան
Քարտուղար՝ Թ.Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

2.ԳՊՀ 2014-2015 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

/զեկ՝ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

3.ԳՊՀ միջազգային համագործակցության ծրագրերի ընթացքը և արդյունքները:

/զեկ՝ պրոռեկտոր Ա.Ապրոյան/

4.ԳՊՀ 2014-2015 ուստարվա տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

/զեկ՝ պրոռեկտոր Ա.Ապրոյան/

5.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը ներկայացրեց պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Նա նշեց, որ 2014-2015 ուսումնական տարում հեռակա ուսուցման ֆակուլտետում կրթական գործընթացն իրականացվել է ըստ կրթության զարգացման պետական ծրագրի հիմնական դրույթների, բուհի զարգացման ռազմավարական ուղղությունների և ֆակուլտետի զարգացման առաջնահերթությունների: Չնայած դրան՝ ընդհանուր առաջադիմությունը նախորդ տարվա համեմատ անկում է ապրել, որը մտահոգիչ է և նախանշում է ծրագրավորվող գործողությունների ուղղությունները: Ընդունելության գործընթացը ներկայացնելիս նշվեց, որ

բնագիտական մասնագիտությունների նկատմամբ նվազել է հետաքրքրությունը, որի հետևանքն է ԳՊՀ-ում այդ մասնագիտությունների գծով դիմորդներ չլինելը:

Ուստարվա ընթացքում կատարվել են աշխատանքներ ուսանողներին ակադեմիական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ. կազմակերպվել են լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություններ և անհատական աշխատանքներ: Ավելացել են ֆինանսական աջակցություն ստացած ուսանողների և ֆինանսավորման աղբյուրների թիվը: Ձեկուցողն այնուհետև անդրադարձավ այլ բուհերից տեղափոխություններին և երկրորդ մասնագիտություն ստացողներին, համալսարանից հեռացումներին: Ներկայացվեց նաև ֆակուլտետի զարգացման հայեցակարգը:

Ն.Կուտուզյանը ներկայացրեց նաև 2014-2015 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվությունը և նոր ուստարվա զարգացման ռազմավարական ուղղությունները: Որպես ձեռքբերում ներկայացվեց այն, որ ԳՊՀ-ում ուսումնական տարին նշանավորվել է կրթական գործընթացի բոլոր բաղադրիչների ուղղությամբ տարվող արդյունավետ աշխատանքներով: Այնուհետև Ն.Կուտուզյանը անդրադարձավ ընդունելության, ուսանողական համակազմի համալրման, առաջադիմության, ամփոփիչ ատեստավորման հարցերին՝ բերելով համապատասխան թվային տվյալներ ու փաստեր: Ավելի ակտիվ է դրսևորվել միջազգային համագործակցությունը, որի շրջանակներում կազմակերպվել են սեմինարներ, վերապատրաստումներ, խորհրդատվություններ, փոխայցելություններ: Ուսանողների գիտահետազոտական պրակտիկաները արդյունավետ կազմակերպելու նպատակով պայմանագրեր են կնքվել բանկային ու գիտական կազմակերպությունների, դպրոցների հետ: Մշտապես անցկացվել են հարցումներ ուսանողության շրջանում՝ որոշելու նրանց բավարարվածության աստիճանը համալսարանից ստացած կրթությունից: Ն.Կուտուզյանը ամփոփեց հարցումների արդյունքները և ներկայացրեց նաև 2015-2016 ուստարվա զարգացման ռազմավարական ուղղությունները:

Պրոռեկտոր Ա.Ապրոյանը հանգամանորեն ներկայացրեց միջազգային այն ծրագրերը, որոնց մասնակցում է նաև Գավառի պետական համալսարանը: Այդ ծրագրերը 15-ն են, որոնցից 3-ը արդեն փակվել են, սակայն բացվել են 5 նոր ծրագրեր: ԳՊՀ-ն ակտիվ և արդյունավետ մասնակցություն ունի այդ ծրագրերում:

ԳՊՀ 2014-2015 ուստարվա տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները ներկայացրեց պրոռեկտոր Ա.Ապրոյանը: Նա ասաց, որ համալսարանի տնտեսատեխնիկական անձնակազմն իրականացրել է իր գործառույթներից բխող միջոցառումներ՝ համապատասխան համալսարանի զարգացման ռազմավարական հայեցակարգի: Տնտեսատեխնիկական

գործունեությունն իրականացել է տեղեկատվական տեխնոլոգիաների, տեխնիկական և անվտանգության ապահովման, տնտեսական և սպասարկման

բաժինների աշխատակիցների ուժերով: Բարելավվել է համալսարանի նյութատեխնիկական բազան, ձեռք են բերվել գրենական պիտույքներ, մասնագիտական և գեղարվեստական գրականություն: Աշխատանքներ են կատարվել շենքերի ու շինությունների վերանորոգման ուղղությամբ: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

Ելույթով հանդես եկավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա ասաց, որ ուսումնագիտական գծով առաջադիմությունը նշանակում է կրթության որակի բարձրացում, որը մեծ մասամբ կախված է դասախոսներից: Ոսանողներին պետք է մղել գիտելիքներ կուտակելուն և հատկապես հեռակայուն գնահատականներ չպետք է բաշխվեն: Շատ կարևոր է ուսումնառության ընթացքում ուշադրության կենտրոնում պահել գիտահետազոտական բաղադրիչը: Աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը շատ կարող է օգնել ուսանողական հարցումների վերլուծությունը՝ բացասական երևույթները վերացնելու նպատակով: Առաջարկվեց ներկայացնել գործողությունների ծրագիր: Տիկին Հակոբյանը առաջարկեց ուսումնասիրել կառավարության կողմից մշակված 2016-2021թթ. կրթության զարգացման ծրագիրը և ներկայացնել նկատառումներ ԳՊՀ զարգացման ծրագիրը ստեղծելու համար:

Ընթացիկ հարցերը ներկայացնելիս Ն.Կուտուզյանը ուշադրություն հրավիրեց նոր մասագիտությունների ցանկին, որին նախապես ծանոթացել էին դեկանատները, և առաջարկեց հաստատել այն:

Հիմք ընդունելով զեկուցումները, ելույթներն ու առաջարկությունները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. Հաստատել ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

3. ԳՊՀ 2014-2015 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4. Հաստատել ԳՊՀ 2015-2016 ուստարվա ուսումնագիտական գործունեության զարգացման հայեցակարգը:

5. Հավանություն տալ ԳՊՀ միջազգային համագործակցության ծրագրերի կատարման ընթացքին, արդյունքները գնահատել բավարար:

6. ԳՊՀ 2014-2015 ուստարվա տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

7. Հաստատել ԳՊՀ 2015-2016 ուստարվա տնտեսատեխնիկական գործունեության զարգացման հայեցակարգը:

8. Հաստատել նոր մասնագիտությունների ցանկը:

9. Երկշաբաթյա ժամկետում ներկայացնել գործողությունների ծրագիր՝ ուսանողական հարցումների վերլուծության արդյունքում բացահայտված թերությունները վերացնելու նպատակով:

10. Ներկայացնել առաջարկություններ 2016-2021թթ. կրթության զարգացման վերաբերյալ:

11. Հաստատել «ԳՊՀ հաշվապահության աշխատակարգը»:

Գիտխորհրդի նախագահ՝
Գիտքարտուղար՝

/ Ռ. Հակոբյան/
/Թ. Ասոյան/